

# ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

أزتاك جريدة يومية سياسية وأدبية - الدائرة المسؤولة: إيدار ووشكيان

1500 L.Ռ. 75ԲԳ՝ ՏԱՐԻ, ԹԻԻ 188 (21238) ՇԱՐԱԹ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2002 10 ԷՁ

ՎԵՐՁԻՆ ԺՄՈՒՐ

ՈՒԱՇԻՆԿԱԾԸՆ ԿԸՆԴՈՒՆԻ ԻՐԱՔԻ ԳԾՈՎ  
ՖՐԱՆՍԱՅԻ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿԸ

Երէկ գիշեր հաղորդուեցաւ, որ Միացեալ Նահանգներ առիթ պիտի տան ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին՝ Իրաքի հարցով նոր կեցուածք մը ձևադրելու: Արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ռիչարտ Պաուլցը ըսաւ, որ Ուաշինկթըն կ'ընդունի երկու հանգրուանով նոր գործընթացը, վոր առաջարկած է Ֆրանսա, յայտնելով սակայն, թէ միշտ ալ իրեն կը վերապահէ իրաւունքը՝ միակողմանի հակադրուելու, եթէ ՄԱԿ այս անգամ ալ ձախողի: Ֆրանսա անմիջապէս արձագանգեց Ուաշինկթընի յայտարարութեան: Ժաք Ծիրաք Պէյրութն յայտնեց, թէ Իրաքի գծով ՄԱԿի բանակցութիւնները յառաջդիմութիւն սկսեալ արձանագրել, այսուհանդերձ վերջնական համաձայնութիւն մը չէ գոյացած տակաւին:

## ՖՐԱՆՍԱՍՈՍ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԳՐԴ ՎԵՏԱԺՈՂՈՎՐ ՍԿՍԱԻ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ ՆԱԽԱԳԱՐ ԼԱՐՈՒՄ ԽՍՏԻ ԴԱՏԱՊԱՐՏԵՑ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐԿԻ ԱՇԽԱՐԿՆ ՄԷՋ ԲԻՐՏ ՈՒԺԻՆ ԴԻՄԵԼԸ ՄԻԱՅՆ ՎԵՐՋԻՆ ԸՆՏՐԱՆԵՐԸ ՊԷՏԵ Է ԸԼԼԱՅ

Ֆրանսախոս երկիրներու կազմակերպութեան Թրդ վեհաժողովի բացման նիստը գումարուեցաւ երէկ կէսօրէ առաջ, Պէյրութի «Պիէլ» կեդրոնատեղիին մէջ: Առաջին անգամ ըլլալով արաբական երկիր մէջ գումարուող այս վեհաժողովին կը մասնակցին 55 պետութիւններու նախագահներ, վարչապետներ կամ ներկայացուցիչ պաշտօնատարներ, ինչպէս նաեւ վեհաժողովը գլխաւորող Լիբանանի նախագահին կողմէ հրահրուած Ալճերիոյ եւ Սլովաքիոյ նախագահներ Ապտէլ Ազիզ Պուլթաֆիլը եւ Ռուտոլֆ Շուսթըրը:



Էմիլ Լահուտ

Նշենք, որ բացման նիստին ներկայ գտնուեցան լիբանանցի եւ օտար անձնակազմներու նախագահներ, որոնց շարքին էին խորհրդարանի նախագահ Նեպի Պըրրի, վարչապետ Ռաֆիք Հարիրի, մարոնիներու նախարար Պուլթոս Սֆէյր պատրիարքը, Հրդպալլայի ընդհանուր քարտուղար շէյխ Հասան Նասրալլա եւ քաղաքական, կրօնական ու դիւանագիտական անձնակազմներու նախագահներ, որոնց շարքին՝ Սեպուհ Յոմիանեան) երեսփոխաններ եւ Համայնքապետներ, ընդհանուրը՝ 2800 հոգի: Հրահրուած շարքին էին Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպսկոպոսը, Հ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Յովիկ Մխիթարեան:



Ժաք Ծիրաք

Գաղթականներու հարցերու նախարար Մարուան Համատէ յաջորդաբար խօսք առնելու հրահրեց ժողովականները: Հանրապետութեան նախագահ Գոր. Էմիլ Լահուտ պահանջեց, որ ՄԱԿ վերահսկէ միջազգային հակամարտութեանց լուծումին եւ ընդգծեց, որ նման հակամարտութիւններու պարագային ՄԱԿը չըջանալու որեւէ փորձ նորմալ անընդունելի է որքան միջազգային քաղաքականութիւնը յատկանշող երկու չափերու կշիռը: Նախագահ Լահուտ ըսաւ, որ Լիբանան յանձնառու է Մարտին Պէյրութի մէջ գումարուած արաբական վեհաժողովին միաձայնութեամբ որդեգրած այն որոշումին, որ կը զատապարտէ որեւէ արաբական երկրի զէմ գիւնուորական որեւէ արաբ, մասնաւորաբար մատնանշելով Իրաքի պարագան: Իրաքի զէմ գիւնուորական գործողութիւնը մը արդարացունելու համար յառաջընթացող պատրուակները հետո եւ համոզիչ ըլլալէ, որովհետեւ կ'ըսուի, թէ Իրաք անվերապահ յանձնառուութեամբ չի գործադրեր ՄԱԿի կարգ

մը որոշումները եւ կ'արտադրէ հաւաքական կործանումի զէնքեր, իսկ այս պատճառաբանութիւնները համոզիչ չեն, որովհետեւ կորիզային զէնքերով օժտուած իսրայէլ 1948ին ի վեր կ'անվերջ իր ներքին զէնքերը եւ կը մնայ անպատիժ, ըսաւ ան եւ ընդգծեց, որ այս ընթացքը ամէնէն վտանգաւոր քայլը երուսաղէմը մարտադրող հուշակոթիկը որոշումն է, իսկ Միացեալ Նահանգներու նախագահը իսրայէլի մէջ իր երկրին դեպատնետները երուսաղէմ փոխադրելու օրէնքը ստորագրելով՝ «վաւերացուցած» կ'ըլլայ միջազգային օրէնքի անընդունելի խախտումը: Նախագահ Լահուտ ըսաւ, որ «ամերիկեան Քոնկրէսին կողմէ քանարկուող այսպէս կոչուած Սուրիայի հարցաւոր, բացայայտ կը դրոշմէ ամերիկեան տկարութիւնը ընդգծելով ի նպաստ ճնշում բանեցնող փոխարէն աւելի կը խորացնէ վիճը՝ առանձնազերծելով իր անհրաժեշտութիւնը չի դրսևորուելու Ուաշինկթընի ջոկերին

գծով իսրայէլի ստեղծած արուեստական տագնապին առիթով: Նախագահ Լահուտ հաւաստեց, որ Լիբանան վճռած է միջազգային օրէնքի հիմամբ այդ ջոկը օգտագործել լիբանանցի ժողովուրդի կենսական կարիքները ապահովելու համար: Նախագահ Լահուտ խստի դատապարտեց իսրայէլի կիրարկած պետական ահաբեկչութիւնը եւ դիտել տուաւ, որ իսրայէլացի քաղաքայիններուն զէմ մարայէլի պետութեան զործած սարսափելի վայրագութիւններուն: Ընկերային, անտեսական եւ քաղաքական խորունկ վիճմը պառակտած է աշխարհը, որովհետեւ համաշխարհայինացումը, երկրագունդի տարբեր կիւրծերը ներդրանակ իրապէս կը վերածելու փոխարէն աւելի կը խորացնէ վիճը՝ առանձնազերծելով իր անհրաժեշտութիւնը չի դրսևորուելու Ուաշինկթընի ջոկերին

թեան միջոց: Ֆրանսայի նախագահ Ժաք Ծիրաք իր խօսքին մէջ ընդգծեց, որ ֆրանսախոսներու կազմակերպութեան առաջնութիւնն է յառաջ տանել խաղաղութիւնը, իսկ մշակութիւններու երկխոսութիւնը կը դիւրացնէ մարդկային փոփոխութեան քաղաքացիները, ինչպէս նաեւ կենսական ազդակ մըն է քաղաքակրթութիւններու հակամարտութեանց զէմ մղուող պայքարին մէջ, որովհետեւ կ'օժանդակէ վերջնական խաղաղութեան հիմքերու ստեղծումին: մինչ այդ, պէտք է ոչ մէկ ճիգ խնայել լուծելու համար մեր ժամանակներու հակամարտութիւնները: Ծիրաք ըսաւ. «Այս ժողովին առիթով կը վերահաստատենք մեր խոր հաւատքը, որ արդի աշխարհին մէջ իրար ուժին դիմադրող պետութիւնները պիտի չեն անհրաժեշտ ընդունել կ'ըլլայ միայն արդար ինքնապաշտպանութեան եւ կամ իրաւաստ միջազգային մարմիններու որոշումին բերումը»: Շար.՝ էջ 2

## ՀԱՅԱՍՏԱՆ ՎԱՂԸ՝ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի մէջ վաղը տեղի պիտի ունենան տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւններ: Հանրապետութեան տարածքին 654 համայնքներու մէջ տեղի պիտի ունենան համայնքապետի, իսկ 645 համայնքներու մէջ՝ աւագանիի ընտրութիւններ: Կեդրոնական Ընտրական Ցանձնաժողովի տուեալներուն համաձայն, համայնքապետի պաշտօնին համար պիտի պայքարին 1318 թեկնածուներ, իսկ աւագանիի պաշտօնին՝ շուրջ 4000: Հայաստանի ընտրական օրէնսգիրքին համաձայն, քուէարկութիւնը պիտի սկսի Կիրակի առաւօտեան ժամը 8:00ին, եւ պիտի տեւէ մինչեւ երեկոյան ժամը 20:00: Ընտրութիւններու նախնական արդիւնքները պէտք է հրապարակուին քուէարկութեան աւարտէն 28 ժամ ետք: Տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւններուն իրեն դիտորդ մասնակցելու համար դիմում ներկայացուցած են 1078 տեղացի եւ 67 միջազգային դիտորդներ: Այս նպատակով երեւան ժամանած է Եւրոպական Սորհուրդի տեղական եւ տարածքային իշխանութիւններու Քոնկրէսի պատուիրակութիւնը: Պատուիրակութիւնը հանդիպում ունեցած է Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցութեան համակարգող նախարարին հետ, որ տեղեկութիւններ փոխանցած է ընտրութիւններու կայացման, օրէնսդրութեան եւ կազմակերպական հարցերու շուրջ:

## ԸՆԿՈՒՄՆԵՐԸ ՊԻԼԵՆՑ ԷՃԵՒԹԻ ՅԱՅԱՐԱՐՈՒԹԵԱՆ

## ԹՈՒՐԲԻԱ - ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԸ ԲԱՆԱԼՈՒ ԼՈՒՐԵՐԸ ՉԵՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՐԸՆԸ ՀԱՅՏԱՐ ԱՆԻԵՒ

Արաբական Լիգայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա նկատել տուաւ, որ պաղեստինցիներուն զէմ իսրայէլեան վայրագութիւնները անընդհատ կը սաստկանան եւ իսրայէլ խաղաղութեան արաբական նախաձեռնութեան պատասխանած է պատերազմ շղթայագրեծելով պաղեստինցիներուն զէմ, սպառնալիքներ ուղղելով Լիբանանի եւ Սուրիոյ եւ վիճեցնելով խաղաղութեան ըրող նախաձեռնութիւնները: Մուսա դիտել տուաւ, որ իսրայէլ Լիբանանի ուղղուած իր սպառնալիքները սաստկացուց, երբ ան յայտարարեց, թէ պիտի օգտագործէ Ուաշինկթոնի ջոկերը իր օրինական բաժինին մէջ մասը, իսկ միջազգային լուծութիւնը կը քաջալերէ իսրայէլը: Անհաւասարակ ընտրութիւնն ու իսրայէլի ի նպատակ կողմնակցութիւնը պատճառ դարձան խաղաղութեան գործընթացի անցիակի բոլոր հանգրուաններու ձախողութեան, իսկ միեւնոյն ճակատագիրին պիտի մատնուին նաեւ հետագայ փորձերը, եթէ միջազգային ուժերը պարկեշտ մնան: Մուսա յոյս յայտնեց, որ խոհեմութիւնն ու բանակցութիւնը յաղթանակաւ լուծուին:

«ԸՍՅԻՏԱՆ»-Ի ՀԵՏ  
ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԱՅԱՆՔՈՎ

## ԱՍՏՐԱԼԻԱԶՊԱՏԱԿ ԼԻԲԱՆԱՆՑԻ ՄԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Պէյրութ, 18 (ՌՈՅԺԸՐԸ)։— Աւստրալիահայաստակ լիբանանցի մը՝ Մուսա Մուսայի Մուսայի, 41 «Քայլի» հետ կապեր ունենալու յանցանքով: Լիբանանեան օստիկանութիւնը եւ զատական իշխանութիւնները հաստատեցին լուրը: Աւստրալիոյ իշխանութիւնները հաղորդեցին, որ յանցագործը ունի երկու հայաստանցի լիբանանեան եւ աւստրալիական, որուն տիրացած է 1991ին: Ան 1988ին գաղթած է Աւստրալիա, սակայն 1997ին ի վեր կ'ապրի Աւստրալիայէն դուրս: Լիբանանեան իշխանութիւնները միեւնոյն յանցանքով ձերբակալած են նաեւ երեք այլ անձեր, իսկ 19 ուրիշներու զէմ արձակած են վիճուող ի բացակայութեան: Անոնք ունին տարբեր հպատակութիւններ, սակայն չի նշուի անոնց անունը:

# ՆԱԽԱԳԱԿ ԼԱՇՈՒՏ ԽՍՏԻ ԴԱՏԱՊԱՐՏԵՑ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՔԵԿՉՈՒԹԻՒՆԸ...

Շարունակուած Ա. ԷջԷԸ

Կան դուրս կու գան իրաքեան տազնապը լուծելու եղանակին շուրջ բանավեճէն. ան մաղթեց, որ կը դիւրանայ ՄԱԿի գէնքի քննիչներու իրաք վերադարձը եւ այս տազնապի բոլոր անդրադարձները կը դարձանւնին այնպիսի ձեւով մը, որ կը յարգէ իրաքի գերիշխանութիւնն ու հողային ամբողջականութիւնը, որպէսզի ՄԱԿի որոշումներու գործադրութեամբ վերջ դրուի իրաքի ժողովուրդին պարտադրուած շրջափակումին:

Քանատայի վարչապետ ժան Քրէթիէն իր խօսքին մէջ ընդգծեց անհրաժեշտութիւնը՝ պաշտպանելու մշակութային արժանաւորութիւնը: Ան բոլոր պետութիւններէ խնդրեց ստորագրել ականներու արգիլման Օթավայի համաձայնագիրը, կոչ ուղղեց Միջին Արեւելքի ղեկավարներուն՝ աշխատելու խաղաղութեան համար եւ օժանդակելու Փղոսկըրեայ Ափունքի տազնապի լուծման ի խնդիր:

Վիեննայի նախագահ Լուոնկ իր խօսքին մէջ դատապարտեց անաբեկչութեան բոլոր ձեւերը եւ ընդգծեց, որ անոր դէմ պայքարը չի կրնար յաջողութեամբ պսակուիլ եթէ սահմանափակուի զինուորական ընտրանքով, վնաս պիտի պատճառէ անաբեկչութեան տուն տուն պատճառներն ու մանաւանդ արմատախիլ



Պութրոս Ղալի

ընել անարդարութիւնը, ցեղային, կրօնական եւ մշակութային խտրականութիւնը:

Ան զօրակցութիւն յայտնեց պաղեստինցի ժողովուրդին, որ կը պայքարի վերատիրանայլու համար իր հողին եւ անկախ պետականութեան իրաւունքին, իսկ ինչ կը վերաբերի իրաքի, ապա ան զօրակցութիւն յայտնեց այդ հարցը բանակցութեան ճամբով լուծելու ճիգերուն, զգուշացրնելով, որ այդ երկրին վրայ յարձակում մը մեծ վնաս պիտի պատճառէ իրաքի ժողովուրդին:

Ռուսները նախագահ իլիեպուր իր խօսքին մէջ

կեղծոնացաւ անաբեկչութեան դէմ պայքարելու միջազգային ճիգին վրայ, նկատել տալով, որ Սեպտեմբեր 11-ի դէպքերը փաստեցին, թէ աշխարհը կարիք ունի քաղաքակրթութիւններու միջեւ երկխօսութեան:

Միջին Արեւելքի մէջ պատերազմի փոխարէն բանակցութիւն եւ խաղաղասէր ոճ որդեգրելու կոչ ուղղելով, ան արդար ան ամբողջական լուծում պահանջեց շրջանային տազնապին:

Մալի նախագահ Ամատու Թուսուրի, իր խօսքին մէջ ընդգծեց, որ այս կազմակերպութիւնը խաղաղութեան պատգամ կ'ուղղէ Միջին Արեւելքի բոլոր ղեկավարներուն, իսկ քաղաքակրթութիւններու երկխօսութիւնը կազմակերպութեան էական յատկանիշներէն մէկն է:

ՄԱԿի ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչը՝ Լուիզ Ֆրէշմանը արդարձաւ Միջին Արեւելքի հարցերուն, պահանջելով քաղաքական լուծում ապահովել պաղեստինեւիսրայէլեան հակամարտութեան, որպէսզի երկու ժողովուրդը

ները կարենան միջազգային որոշումներու գործադրութեան շնորհիւ ապրիլ խաղաղ կեանք:

Բացման նիստին խօսքը արտասանեցին, ԵՌԻՆՆՍՔՕԻ ընդհանուր տնօրէն Քոչիբո Մացուրայ եւ Ֆրանսախօս երկիրներու կազմակերպութեան ընդհանուր քարտուղար Պուլթրոս Ղալի, որ վերառաւ Ֆրանսախօսութեան առաքելութիւնը եւ ընդգծեց երկխօսութեան անհրաժեշտութիւնը:

Առաւօտեան նիստի աւարտին Ղալի ճաշկերույթ մը տուաւ ի պատիւ ժողովականներուն:

Նշենք, որ բացման նիստին արտասանուած բոլոր խօսքերուն մէջ ժողովականները գոհունակութիւն յայտնեցին վեհաժողովին Լիբանանի մէջ գումարման համար շնորհակալութիւն յայտնեցին իրենց գտած ջերմ

ընդունելութեան համար եւ իրուատեցին ժողովին կազմակերպութեան թիւնը:

Ֆրանսախօս երկիրներու վեհաժողովին երկրորդ նիստը սկսաւ կէսօրէ ետք ժամը 3:30ին: Նիստին դարձեալ մասնակցեցան մարոնիներու նասրալլա Պուլթրոս Մֆէյր պատրիարքը եւ Հրզպալլայի ընդհանուր քարտուղար Հասան Նասրալլան:

Շար.՝ Էջ 10

www.mesrobian.com

Արձանագրութիւններ կը բարձրանան

**260504**

**JEWELRY Design**  
**DIAMOND Setting**  
**WAX Molding**  
**GEMOLOGY**

**HAIR STYLING**  
**MAKE UP**

Վարման արեւսաւոր միջոց կը գնահատուի, վկայեալ վարման ցան անկի

**Tele-Video & Radio Repair**  
**Car Electricity & Electronics**

**COMPUTER**  
Software & Hardware + INTERNET  
Խիստ մասնային կրթական

**English**  
For International Business - TOEFL - Cambridge University Certificate + 8 օտար լեզուներ

**MESROBIAN TECHNICAL COLLEGE**  
Յաջողութեան 20 ամեայ փորձառութիւն

**TICKETING**  
**IATA**  
Գործի Բաց Լիցնզագիր Ուզած երկրի մէջ

**LCCIEB**  
Business Մասնագիտութիւններ վկայականը Լոնտոնում

**B.T.**  
Համալսարան եւ Գործ երկու ընտրութիւն մէկ վկայականով

**365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ**

Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինը կը ստանձնէ օրուան մը ճաշի ծախսը 300 ամեր. տուարով:

Տիկին Նազելի Եարտըմեան իր ամուսնոյն Գարեգին Եարտըմեանի եւ հարսին՝ Մակի Եարտըմեանի յիշատակին 18 Հոկտեմբեր:

**Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅՅԻՈՅ ԱՆՈՒԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ**

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Կիրակի, 27 Հոկտեմբեր 2002ին Գիւտ Խաչի Կիրակին, պիտի տօնախմբուի Ս. Նշան Մայր եկեղեցւոյ անուանակոչութիւնը:

Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին մատակցուի ոչխար մուկիւրել, եւ կամ մասնակցիլ նիւթական մուկիւր, թող բարի ըլլան կապ պահել քաղակառուցեան քարտուղարութեան, հեռաձայնելով 01-981102/3 եւ կամ տեղ հօր 03-885941:

**ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅՅԻՈՅ**

**ՄԱՀԱԶԴ**

Տիար Ֆառուզ Տիպալ եւ զաւակները՝ Ֆատի եւ Ռիմա

Տէր եւ տիկին Յարութիւն Մճրիքեան եւ դուստրը Տէր եւ տիկին Վահէ Ետալեան եւ զաւակը Տէր եւ տիկին Ֆարաթ Իսա եւ զաւակը Տէր եւ տիկին Ռաֆֆի Թորիկեան եւ զաւակը Տիկին Ռեֆաա Տիպալ

Տէր եւ տիկին Հասան Տիպալ եւ զաւակուներ Տէր եւ տիկին Պասսամ Տիպալ եւ զաւակուներ Տիկին Ռիմա Տիպալ եւ զաւակուներ Արսլանեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, բորջ, մօրաբորջ եւ հարազատին՝

**ՍՈՆԱ ՏԻԱՊԻ (Ծնեալ՝ ՄՃՐԻՔԵԱՆ)**

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 17 Հոկտեմբեր 2002, առաւօտեան ժամը 12:30ին, Ժեհթաուի հիւանդանոցին մէջ յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ, Ուրբաթ, 18 Հոկտեմբեր 2002, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Պուրճ Համուտի Ազգային դերեզմանատան մատրան մէջ:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապը:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Նիւ Ռաուտայի շրջան, «Նոր Տամ Տէ Զաֆոր» դպրոցին դիմաց, «Միշէլ Թրատ» շէնք, 4րդ յարկ, Շաբաթ 19 եւ կիրակի 20 Հոկտեմբերին:

**ԲԱՆՏԱՌՈՒԹԱԾ**

Տեր եւ տիկին Արօ եւ Յողիկ Եագուպեան բախտաւորուած են անչիմեկ աղջիկ զաւակով մը՝

**ՄԱՐԻԱՆԱ**

18 Հոկտեմբեր 2002

**ԳՐԱՌԻԱԾ ՕՐ**

**Հ.Յ.Գ. «ՌՈՍՏՈՄ» ԱՎՈՒՄԲԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՄՈՎԱՏՔԻ» ՊԵՆՏՈՎ**

24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2002

**ՎԱՐՉՈՒ ՎԱՃԱՌՏՈՒՆ**

Պուրճ Համուտ, Սամբըր ԱՐԻՆԻ դիմաց, 20 բառ. մէքր + վերնայարկ: Կեռ. 03 - 737778 եւ 04 - 531852 (երեկոյեան):

**ՎՈՒՉՈՒԻ**

Ոսկերիչի գործատեղի մը կարիք ունի ռոտիոնի մատիտի վրայ աշխատող փորձառու օրիորդի մը: Կեռ. 01-249706:

**ՎԱՐՉՈՒ ՎԱՃԱՌՏՈՒՆ**

Պուրճ Համուտ Արաքս փողոց, 100 բառ. մէքր: Կեռ. 01-261035:

ԼՕՍԻ ԵՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄ

**ԱՆՏԱՏՈՂ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՆԿՃԱՐ ԴԱՍԸՆԹԱՅԸ**

Անցեալ տարուան ծրագրի յաջողութեան մեկնած ԼՕՍԻ Երջանային Վարչութեան ընկերային յանձնախումբը եւ ԼՕՍԻ «Արաքսի Պուլթրոսեան» ընկերաբաժնեկազմակերպութեան գրասենեակը, այս տարի եւս կազմակերպած են գիշերային **թեթիք** (computer) եւ անգլերէնի դասընթացներ 11 18 տարեկան պատանիներու համար, որոնք նիւթական եւ ընկերային պատճառներով գրկուած են դպրոց եւ կ'աշխատին ապահովելու համար իրենց ընտանիքներուն նիւթականը:

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին գիշերային այս դասընթացներուն արձանագրուիլ, ներկայանան ԼՕՍԻ «Արաքսի Պուլթրոսեան» ընկերաբաժնեկազմակերպութեան ամեն օր ժամը 10:00էն 3:30, առաջին յարկ, ընկերային ծառայութեան գրասենեակ, ընկերային ծառայող, օրը. Գարին Մուշոյեանի մօտ:

Յայտնենք, որ այս ծրագիրը կը իրականացուի եւ կը ֆինանսուի ՄԱԿի Աշխատանքի Միջազգային Կազմակերպութիւնը, Սիւն Էլ Ֆիլի եւ Պուրճ Համուտի մէջ գործող 8 բարեսիրական կազմակերպութիւններու միջոցով: ԼՕՍԻ իբրեւ անդամ միջբարեսիրական արաքսեան այս ժողովին եւ իբրեւ հայ համայնքի զարգացման նպաստող ծրագիր. ստանձնեց այս աշխատանքը, իբրեւ առաքելութիւն իր ծառայութեան մարզէն ներս:

Արձանագրութիւնները կը շարունակուին մինչեւ 9 Նոյեմբեր, 2002:

Ս. ՅԱԿՈՒՐ ԵԿԵՂԵՅԻ ԷՇԵՐԵՅԻ

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

Ի գիտութիւն մեր հաւատացեալ ժողովուրդին կը յայտնենք, թէ Ս. Յակոբ եկեղեցւոյս համար, աւանդութիւն դարձած է Ս. Թարմանչաց Վարդապետաց Մերոց տօնին յաջորդող Կիրակին, եկեղեցւոյս հոգեւոր եւ նիւթական պայծառացման համար իրենց ծառայութիւնը մատուցած հանգուցեալ **Քահանաներու եւ Քաղակառուցիչներու** հոգեւոր համար հոգեհանգստեան պատարագ եւ պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 20 Հոկտեմբեր 2002ին, Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, Էշրեֆի:

Կանգուցեալներուն յիշատակը յարգողներն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

**ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՅԱԿՈՒՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ**

**MULTIMEDIA WORKS**

Ձեր տրամադրութեան տակ կը դնէ հետեւեալ ծառայութիւնները. scanning - printing - CD արձանագրութիւն, CD Եւ կարներու տպագրութիւն, copy audio tape to tape.

Մանրամասնութեանց համար հեռ. 01-243471:

**30 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ 30,000\$ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՓՕԼԻԿԼՕԹ**

Թեքնիքը ընդէժ կարիքաւոր եւ փայլուն սաներու

ԾԱՆՕԹ. Նախապատուութիւնը պիտի տրուի կանուխ դիմողներուն

Արձանագրութիւն ամեն օր **ՓՕԼԻԿԼՕԹ** ընդէժ, Տորա 01 - 251320

Տեր եւ տիկին ՊԵՏՐՈՍ ԾԵՄՐԵՅԵԱՆ

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Հովանաւորութեան՝ **Մշակոյթի նախարար ՂԱՍՍԱՆ ՍԱԼԱՄԻԻ** Կը ներկայացնէ **Հայրենի տաղանդաւոր եւ միջազգային դաշնակախար**

**ԱՐՄԷՆ ՊԱՊԱԽԱՆԵԱՆ**

Երեքշաբթի, 29 Հոկտեմբեր 2002, Էրեկոյեան ժամը ձիշ 8:30ին, **A. U. B.ի ASSEMBLY HALL**ի մէջ:

- Տոնները ստանալ՝ Sodeco Square, Համազգայինի գրախանութ («Շաղոյեան» կեդրոն), «Լեւոն Ծանթ» կեդրոն եւ Ելոյթի օրը կ'իշտէն:

**Բարձր Հովանաւորութեամբ Երիտասարդութեան եւ Մարմնակրթութեան Նախարար ՏՈՔԹ. ՍԵՊՈՒՀ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ Կազմակերպութեամբ՝**

**Հ.Յ.Գ. ԶԱԲԱՐԵԱՆ ՌԻՍԵՆՈՂԱԿԱՆ ՄԻՌՈՒԹԵԱՆ ԾԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԳԵՍ**

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 2 Նոյեմբեր 2002ին, Էրեկոյեան ժամը 9:00ին. **Metropolitan Palace** դահլիճի. **«Dubai Hall»** ճաշարանին մէջ. Հրոշ Թատիք:

### ԻՐԱՆԻ ՓՈԽ ՆԱԽԱԳԱՀԸ ԿԸ ՊԱՏՈՒԷ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Հինգշաբթի, 17 Հոկտեմբեր 2002ի երեկոյեան, ժընեի «Ինթերքոնթինենթը» պանդոկին մէջ Իրանի Իսլամական Հանրապետութեան փոխ նախագահ Սէյէտ Մուհամէտ Ալի Աբթահ պաշտօնական ճաշկերտութիւնը պատուեց Ն. Ս. Ս. Արամ Ա. կաթողիկոսը: Ծաշկերտութիւններ կային Զուիցերլանդի մօտ Իրանի դեսպան ղոկտ. Ալպորպի, Իրանի մէջ կրօնական երկխօսութեան բաժանմունքի ընդհանուր քարտուղար՝ ղոկտ. Ամիր Աբրահիմ, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի քրիստոնէայ - իսլամ երկխօսութեան բաժանմունքի տնօրէն՝ ղոկտ. Թարէք Միթթի, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի եկեղեցիներու հետ յարաբերութեան բաժանմունքի պատասխանատու՝ տիկին Թէնի - Փիրրի Սիմոնեան, վեհափառ հայրապետին ընկերակցող Նորայր Ծ. վրդ. Աշրգեան եւ այլ հրաւիրեալներ:

Ծաշէն առաջ հանդիպում մը տեղի ունեցաւ վեհափառ հայրապետին եւ փոխ նախագահին միջեւ, որուն ընթացքին արծարծուեցան Իրանի հայութեան եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան ու Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հետ առնչուած հարցեր: Վեհափառ հայրապետը իր գնահատանքը յայտնեց վերջերս «արեւան գին»ի գծով Իրանի պետութեան առած դրական որոշումին համար, որով Իրանի պետական դատարաններուն առջեւ հայը եւ իրանցիները հաւասար պիտի ներկայանան լեռայուն: Վեհափառ հայրապետը նաեւ գնահատեց հայ վարժարաններուն գծով Իրանի պետութեան առած դրական քայլը եւ ընդհանրապէս Իրանի հայութեան կապուած խնդիրներուն, առաջարկներուն նկատմամբ պետութեան ցուցաբերած հասկացողութեան համար:

Փոխ նախագահը իր կարգին իր գնահատանքն ու շնորհակալութիւնը յայտնեց վեհափառ հայրապետին Իրանի Իսլամական Հանրապետութեան նկատմամբ ցուցաբերած ջերմ բարեկամութեան ու գործակցութեան համար: Ան գնահատեց Իրանի հայութիւնը, որպէս կապակերպուած գաղութ: Փոխ նախագահը կարելորութեամբ շեշտեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան գործակցութեան նոր մղում տալու հրամայականը, սպասելով վեհափառ հայրապետի յաճախակի այցելութիւնը: Հանդիպումի ընթացքին նաեւ արծարծուեցան քրիստոնէայ - իսլամ երկխօսութեան կապուած հարցեր:

Յայտնենք, որ Իրանի փոխ նախագահը կը մասնակցի ժընեի մէջ տեղի ունեցող քրիստոնէայ - իսլամ միջապագային համագումարին, որուն երկու ատենապետներէն մէկն է վեհափառ հայրապետը:



**la maison du poisson**  
Les délices de la mer à votre portée

Հում եւ եփուած ձկնեղէնի տեսակներ  
Գաւա Տսսի  
Ձրի սպասարկութիւն

Tél & Fax: 01/ 902940 - 902950 - 902960  
Amaret Chalhoub - Autoroute Zalka  
E-mail: lamaisondupoisson@hotmail.com

### ՈՒԱՇԻՆԿԹԸՆ, ՓԱՐԻՉ ԵՒ ՄՈՍԿՈՒԱ ԹԵՒ ԿԸ ՓՈՐՁԵՆ ԸԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ԵԶՐ ՄԸ ԳՏՆԵԼ, ՍԱԿԱՅՆ ՑԱՐԴ ՉԵՆ ՅԱՋՈՂԻՐ

Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաք յայտարարեց, որ ուժի գործածութիւնը վերջին ընտրանքը պէտք է ըլլայ իրաքեան տագնապին լուծման համար: Շիրաք, որ կը խօսէր Պէյրութի մէջ գումարտող ֆրանսախօս երկիրներու վեհաժողովին, դիտել տուաւ, թէ արդի աշխարհին մէջ ուժի գործածութիւնը պէտք է ըլլայ վերջին ընտրանքը, որովհետեւ անհկա պէտք է գործածուի իսկական ու օրինական ինքնապաշտպանութեան համար եւ կամ պէտք է ըլլայ որոշումը միջազգային ընտանիքին ու իշխանութիւններուն:

Շիրաք Հինգշաբթի օր ըսած էր թէ Ֆրանսա կարելի էր լոյս տեսնէր ի գործ կը դնէր դիւանագիտական լուծում մը ապահովելու համար իրաքեան տագնապին:

ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի մնայուն անդամ Ֆրանսա կը թուի թէ ներկայիս կը բռնէր բանալին լուծելու Ապահովութեան Խորհուրդին տարակարծութիւնները Իրաքի հանդէպ որդեգրուելիք բանաձեւի մը համար: Դիւանագէտներ կ'ըսեն, որ ամերիկեան խիստ ու փնտրական գործողութիւն սպառնացող բանաձեւը մերժող Ֆրանսա կը բանակցի Միացեալ Նահանգներու հետ ընդունելի բանաձեւի մը շուրջ համաձայնութիւն գոյացնելու համար: Ապահովութեան Խորհուրդի մնայուն անդամներ Ռուսիա եւ Չինաստան եւս կը մերժեն Իրաքի դէմ վիճակագրական գործողութիւն մը սպառնացող բանաձեւը, որ կը վայելէ Ուաշինկթընի եւ Լոնտոնի զօրակցութիւնը: Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Ճէք Սթրո րաւ, որ Բրիտանիա եւ Միացեալ Նահանգներ յանձնառու կը մնան չէզոքացնելու իրաքեան սպառնալիքը եւ թէ անոնք կը վերապահեն առանձին գործելու իրարու նկատմամբ: ՄԱԿ չյաջողի Սատամ Հիւսէյնը ապապինելու առաքելութեան մէջ:

Ռուսիա իր կարգին կը ծրագրէ նոր բանաձեւ մը առաջարկել Ապահովութեան Խորհուրդին: Պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով ըսաւ, որ դիւանագիտական միջոցները տակաւին չեն սպառած: Իվանով աւելցուց, որ միջապագային քննիչները միայն կրնան պատասխան մը ունենայ Իրաքի հաւաքական զէնքեր ունենալու հարցումին: Ուաշինկթըն եւ Լոնտոն կը պնդեն, որ Իրաք հաւաքական քանդումի զէնքեր ունի, մինչ Ապահովութեան Խորհուրդի մնացեալ անդամները կ'ըսեն, որ քննութիւններու արտաքին կարելի է հաստատել կամ հերքել այդ ամբաստանութիւնը:

Մինչ այդ, Ուաշինկթըն գրեթէ ամբողջացուցած է պատրաստութիւնը նոր բանաձեւի մը, որուն մէջ չի նշուիր վիճակագրական գործողութեան անմիջապէս դիմելու սպառնալիքը: Ուաշինկթըն կը յուսայ, որ բարեփոխուած բանաձեւը պիտի ապահովէ հաւանութիւնը Ապահովութեան Խորհուրդին տասնհինգ անդամներուն: Արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը դիտել տուաւ սակայն որ նոր բանաձեւը չ'արգիլէր Ուաշինկթընը վիճակագրական գործողութեան մը դիմելէ:

● ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ նախագահ Ճորձ Պուշ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի խոստացած է հրէական պետութիւնը պաշտպանել իրաքեան «Սրտ» հրթիռներէն, եթէ Պաղտատ ամերիկեան յարձակումի մը հակադարձէ Իսրայէլը հրթիռներու թիրախ դարձնելով, հաղորդեց «Ուաշինկթըն Փոսթ» օրաթերթը երէկ:

**ՖԻԼԻՓԵԱՆ ԿՂԶԻՆԵՐ**

3 ՁՈՀ, 22 ՎԻՐԱԻՈՐ՝ ՕԹՈՊԻՏԻ ՄԸ ՄԷՋ ՊԱՅԹՈՒՄԻ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ

Ֆիլիպին կղզիներու մայրաքաղաք Մանիլայի մէջ երէկ օթովիւսի մը մէջ պայթած ուռմբի մը հետեւանքով արձանագրուած է 3 զոհ, 22 վիրաւոր:

Ցարդ ոչ մէկը ստանձնեց արարքին պատասխանատուութիւնը:

السفير  
النصار  
الذييار  
الستقبل  
الاتجار

18 Հոկտեմբերի տեղական մամուլը իր առաջին էջերով վիստորաբար անդրադարձած է Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքի Լիբանան այցելութեան եւ Ֆրանսախօս երկիրներու վեհաժողովին:

«Նահար» գրած է. «Շիրաք լիբանանեան խորհրդարանի բեմէն յայտարարեց. Լիբանանը Լիբանան չէ առանց փոխադարձ հասկացողութեան, պատուութիւններու եւ ժողովրդավարութեան. շրջանին մէջ դէպի խաղաղութիւն ընթացող վարձագումները ճամբայ պիտի հարթեն սուրիական ուժերու Լիբանանէն անդրազական հեռացման» Թաէֆի համաձայն: Պատասխանը շրջափակին մէջ մայրիկ ծոռ մը տնկելով՝ Շիրաք վկայութիւն մը տուաւ երկու երկիրներու բարեկամութեան եւ եղբայրութեան շարունակող երթին:

«Մուսրաբ»-ի համաձայն, լիբանանէն ֆրանսական զապթի հանդիպումները լուսարձակները հեռացուցին ֆրանսախօս երկիրներու զապթի ժողովին: Ժաք Շիրաք սուրիական ուժերու հեռացումը կապեց խաղաղութեան հաստատման:

Ըստ «Պայրաք»-ի, Ժաք Շիրաք լիբանանցիներուն ըսաւ. Կրնաք միշտ վստահիլ Ֆրանսային. Իրաքի դէմ յարձակումը կը մերժեն: Կարգ մը կողմեր փորձեցին Շիրաքի խօսքերուն շուրջ հարցականներ ստեղծել, բայց նախագահ Լահուտ հարցը վճռեց լուծելով, որ Շիրաքի խօսքը կը համապատասխանէ Լիբանանի կեցուածքներուն: Թերթին համաձայն, Ֆրանսախօս երկիրներու վեհաժողովը այսօր կը բացուի եւ նշաններ կան, որ ան յաջողութեամբ պիտի պատկուի:

«Մուսրաբայալ» գրած է, թէ Շիրաք արտաքին քաղաքականութեան եւ սուրիական օրը. նախագահը ըսաւ, որ Իրաքի հարցը պէտք է լուծել միայն միջապագային որոշումներու ծիրին մէջ:

Ըստ «Տիար»-ի, Շիրաք արժանացաւ բացառիկ ընդունելութեան եւ յարգանքի: «Լիբանանի մեծ բարեկամ Ժաք Շիրաքի երկար օրը Լիբանանի

մէջ. պաշտօնական աղբիւրներ ողջունեցին Շիրաքի արտաքին քաղաքականութեան նախագահ Լահուտ այսօր կը բանայ ֆրանսախօս երկիրներու խորհրդաժողովը», գրած է «Լիուս»:

«Սաֆիր» նշած է, թէ Ժաք Շիրաք Ֆրանսախօս երկիրներու վեհաժողովին առաջ յայտարարեց. հարաւային սահմանի կապուած գիծը եւ շուրջը հարցով միջապագային օրէնքը պէտք է յարգուի. Ֆրանսայի նախագահը լիբանանցիներուն խրատական պատգամներ փոխանցեց՝ միանականութեան, հարաւի եւ Ռապալիի հարցերուն, տնտեսութեան, ինչպէս նաեւ Սուրիոյ հետ յարաբերութեան մասին:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, Ժաք Շիրաք սուրիացիներուն հեռացումը կապեց խաղաղութեան գործընթացին. նախագահը ըսաւ, որ «Փարիզ - 2» ժողովը պիտի գումարուի քանի մը շաբաթէն: Պետական պաշտօնական շրջանակները Շիրաքի խօսքերուն մասին իրենց գոհունակութիւնը յայտնեցին:

«Լորիան Լը ժուր» նշած է, թէ Ժաք Շիրաք Լիբանանի նկատմամբ Ֆրանսայի խոր համակրանքը արտայայտող ճառ մը արտասանեց. ան լիբանանցիներուն կոչ ուղղեց ռեւել մէկը լուսապայծառ վրայ չձգելու. Ֆրանսայի նախագահը պատասխան կողմերուն ուղղուած պատգամներ փոխանցեց:

Ռապալիի շուրջը կայանի բացման առնչութեամբ արծարծուած նիւթերու կարգին «Լիուս» գրած է, թէ Իսրայէլի փոխադրութեան նախարար Էֆրայիմ Սընէ սպառնացած է Լիբանանը հարուածել, եթէ հոսող ջուրի քանակը աւելցնէ:

Այլ միջապագային լուրերու կարգին թերթերը գրած են, թէ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ յայտարարած է, թէ Իրաքի դէմ պատերազմը միլիոնաւոր պոհեր պիտի խլի: Ան աւելցուցած է, թէ Հրպայիսի եւ Ժիհաւի նկատմամբ իրենց զօրակցական համակրանքը փոփոխելի չեն. Արիէլ Շարոն ռազագործ մըն է, նշած է Ասատ:

Պաղեստինեան բռնագրաւեալ հողերուն վրայ շարունակող ջարդերուն մասին «Մուսրաբայալ» գրած է, թէ Պուշի կողմէ Շարոնը «մարդկային» կոչուելէ քանի մը ժամ ետք Իսրայէլի ահաւոր նոր ջարդ մը գործեց կապայի շրջանին մէջ պաղեստինցի քաղաքացիներուն վրայ յարձակելով. 8 պաղեստինցիներ պոհուեցան եւ 60 ուրիշներ վիրաւորուեցան. անոնց մեծ մասը մանուկներ էին:

Լիբանանեան մամուլը նաեւ լուսարձակի տակ առած է ԵՌԻՆԵՍՏՔՕԻ մէջ պատահած ռճիրը, գրելով, թէ ռճագործը դատարանին մէջ յայտարարեց, որ իր ռճիրը գործած է համայնքային ռիսի եւ ինչ չի կրնար արտաբերել:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ      ՎԱՆԱՅ ԶԱՅՆ

Կիրակի կեսօրուան ժամը 12:00ից  
կրնաք ունկնդրել  
**ՀԱՅ ԴԱՏԸ ԱՅՍՕՐ**  
յայտագիրին կրկնութիւնը:

ՊԵՐԵՃԻԿԻ ՀԱՅՐԵՆԵԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Այսու կը յայտնենք մեր հայրենակիցներուն թէ 2002 2003 տարեշրջանի համար սան-սանուկներու կրթական դիմումագիրները կ'ընդունուին միութեան գրասենեակը Գործընթացի, 23 Հոկտեմբերէն սկսեալ ամէն Գործընթացի օրերը, երեկոյեան ժամը 7:30էն 9:00:

Դիմումագիր ներկայացնելու վերջին պայմանաճամբն է 18 Հոկտեմբեր 2002. տոյն թուականէն ետք ներկայացուած դիմումագիրները նկատի պիտի չ'առնուին:

Կը խնդրուի ծնողներէն, անձամբ դիմումագիրները յանձնել մինչեւ վերոյիշեալ թուականը, Պերեճիկի Հայրենակցական Միութեան տունը:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
ԼԻԲԱՆԱՆԻ ՊԵՐԵՃԻԿԻ  
ՀԱՅՐԵՆԵԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

**ՄՕՏ ՕՐԵՆ**

**FUEL CARD**


**ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՖՈՒՆՏ**



# Գրական Էջ

## ՆՈՒՐԻԶԱՏԷԻ ՀԵՏ, ՆՈՒՐԻԶԱՏԷՆԵՐԷՆ ԱՆԳԻՆ...

«Ես հիացած եմ հայ մշակույթով, հայ գրականությանը: Ամէն տեղ պարծենում եմ, որ ես ծառայում եմ դեռևս ճիշդ դարի սկիզբից հրաշալի գրականության ստեղծած ժողովրդին, նրան, որ 1512 թուականին ունեցել է առաջին տպագիր գիրքը, այն դէպքում, երբ շատ ազգեր չգիտէին, թէ ինչ բան է դա: Հայ ժողովուրդն իր բնույթով մշակութասէր եւ մշակույթ ստեղծող է, եւ ես ջանում եմ իմ կարողացածի չափ ներկայացնել այդ մեծ գրականութիւնը»:



Իր ծանօթացման բերքը ամբողջութեամբ վստահիլ մէկ կամ քանի մը նուիրեալներու պատրաստակամութեան եւ ազնիւ տրամադրութիւններուն, եթէ իսկապէս կ'ուզենք հայ գրականութիւնը օտարներուն սիրելի դարձնելու իմացական ճիշդ տեսնել ակադեմական ամուր հիմքերու վրայ:

Սխալ չհասկցուի՛նք: Ահմատ Նուրիզատեաներու բացառիկ կարեւորութեան եւ արժեքի ղիմաց գլխարկ հանելով միայն կարելի չէ լուծել բարգմանչական գրականութեան հարցը: Ընդհանրապէս, առանցքային կարեւորութիւններ կայացնող Նուրիզատեաներու անհրաժեշտութիւնը ընդգծել, բարոյապէս կը նշանակէ բարգմանչական խնդիրը ցանկապէս իբրեւ հաւաքական պատասխանատուութիւն: Վերջապէս, եթէ իսկապէս որոշած ենք քայլ մը անդին անհատական խնդիրներուն «իմ կարողացած չափ»ի սահմաններէն, իբրեւ Ոսկեգար եւ մշակույթ կերտած քաղաքակիրթ ազգ պարտաւոր ենք ոչ միայն ստեղծել նման նիւթերու յարատեւումը երաշխաւորող նիւթական ու բարոյական կոտորաններ, ոչ միայն ցուցաբերել հաւաքական շահագրգռութիւն, այլեւ, Մշտնոյցի եւ առաջին բարգմանիչներու օրինակին հետեւելով՝ զայն վերածել հաւաքական տրեւաբան աշխատանքի, հետեւկար ու տեսլական ունեցող մշակութային առաքելութեան:

Պետական մակարդակով եւ ակադեմական տարողութեամբ, ներառելով ու ծրագրելով մշակութային քաղաքականութեան մը հիմամբ, արեւելեան ու արեւմտեան մայր լեզուներով, որպէսզի Նուրիզատեաներու կրկնապէս ծափահարելի հաւատարմութեան վտակները հոսին այն մայր գետին մէջ, որուն անունն է հայ գիրի եւ մշակույթի համաշխարհայնացման ամբողջական շարժումը:

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

Հայ ժողովուրդի եւ մշակույթի ազնիւ բարեկամներէն մէկուն՝ բանաստեղծ, բարգմանիչ եւ մտաւորական Ահմատ Նուրիզատեի գրչից պատկանող վերի տողերը յատուկ քաղցրութեամբ կը հնչեն այս օրերուն, երբ մեր իրացնի եղբոր Սուրիա եւ Լիբանան առաջին այցելուելու ընթացքին ծրագրումով մը կը զուգահիշի Թարգմանչաց տօնին: Երեսուն տարի շարունակ հայ գիրին ու մշակույթին սպասարկած, անոր տարածումը «իմ կեանքի գործն է» յայտարարած այս ազնուարին իրացնիին մետրոպատան վաստակին առջեւ ամենայն յարգանքով կարգ առնելէ ետք (տե՛ս «Ազդակ», Շաբաթ, 4 Մայիսի գրական էջի «Տարօրինակ «հայ» մը» խորագրեալ մեր յօդուածը), այսօր, իր Լիբանան այցելութեան առիթով կ'արժէ քննարկ հիւանդի ակնարկ մը նետել Ոսկեգար կերտած մեր սրբանուն հայրերուն բարգմանչական աւանդին այս արժանաւոր հետեւորդին կենսափորձին վրայ մեծարանքի եւ յարգանքի ընթացիկ յօսքերէն քայլ մը անդին անցնելու եւ հայ գրականութեան ծանօթացման դժուարին գործը լուսարձակի տակ պահ մը անշարժացնելու նպատակով:

Ահմատ Նուրիզատե կամ, թուրքական արագ հաշիւով մը՝ քանի մը հազար էջերու գումարով ներկայացող Երեսնամեայ իերք մը, որուն շուրջ տասնհինգ գիրքերուն երեքը՝ «Հարիւր տարի հայ բանաստեղծութիւն» (հաւաքածոյ, 1154 էջ), «Հայաստանի պատմութիւնն ու մշակույթը» (մեծագրութիւն, 650 էջ), «Խնձորի այգին, անձրեւ եւ ուրիշ վիպակներ ու պատմութիւններ» (հաւաքածոյ, 680 էջ) անուն հաստատու հատորները պիտի բաւեն, որ հաստատութեան մը տարողութեամբ բարգմանչական եւ ուսումնասիրական աշխատանք առանձինն յաջողութեամբ պատկած այս նուիրեալին հարուստ արգասիքը կշռենք ամենայն նշանակութեամբ, ընդգծենք անոր ոչ միայն անհախընթաց ըլլալու հանգամանքը, այլեւ՝ որակին յաւելելով փայլը պարզեւոր քանակական կշիռը, որպէսզի հասնինք այն արագ եզրակացութեան, որ ճիշդ չէ, արդար չէ հայ գիրի եւ մշակույթի

## ԻՆՔՍ ԻՄ ՄԱՍԻՆ

... Հետագայում, երբ մտայ պարսից գրականութեան անդաստանը եւ սկսեցի ստեղծագործել պարսկերէն լեզուով՝ եւ իմ պարսկերէն բանաստեղծութիւնները լոյս ընծայեցի իրանի գրական մամուլում, ինքս ինձ մտածեցի՝ քանի որ ծանօթ եմ հայերէն բանաստեղծութեան, լաւ նաեւ հայերէն գրաւորին եւ հնարաւորին չափ ծանաթ եմ հայ մշակույթին եւ մեր զբաղի ժողովրդի բազմադարեան եւ հարուստ մշակույթը ներկայացնել իմ պարսկալեզու հայրենակիցներին: Այդ իսկ պատճառով հայ բանաստեղծուհի հանգուցեամբ Արշի Բարայանի մօտ, 4-5 ամսուան ընթացքում, ծանօթացայ հայ գրերին եւ այրուբներին. ապա տքնաջան աշխատանքով ինքնուս կերպով ծանօթացայ հայերէն գրական լեզուին եւ սկսեցի հայ բանաստեղծներին երկերը վերածել պարսկերէնի ու գրանք հրատարակել պարսկալեզու գրական հանդէսներում ու հետագայում

աշխատանքներին. այդ պատճառով ստիպուած եղայ մեծ քանակով հայ բանաստեղծներին աշխատութիւնները բժայիւրդորօրէն ու մանրակրկիտ կերպով սերտել եւ ուսումնասիրել, որպէսզի իրենց լաւագոյն երկերը ընտրեմ թարգմանելու համար եւ զետեղեմ իմ հայ բանաստեղծութեան նուիրուած անթոլոկիայում: Գա պատճառ դարձաւ, որ իմ հայերէն բանաստեղծութեան հարստանայ ու ճոխանայ. եւ ես քանի որ պարսկերէն լեզուով գրում էի բանաստեղծութիւններ, այս անգամ սկսեցի գրել հայերէն բանաստեղծութիւններ: Իմ հայերէն բանաստեղծութիւնները առաջին անգամ լոյս են տեսել Լիբանանի «Միլակ» ամսագրում, ապա Հայաստանի եւ օտար երկրներին հայ մամուլում:

ԱՀՄԱՏ ՆՈՒՐԻԶԱՏԷ

Թեհրան, Նոյեմբեր 2000 թ. (Հատուած)

## ՊԱՏԱՍԽԱՆ

Ինձ հարց են տալիս Հայերն ամէնուր. Թէ՛ խնձոյքներում, Թէ՛ հանդէսներում Ահմատ Նուրիզատե, Դու, որ հայ չես ու չես ծնուել դու հայ, Ապա ո՞նց գիտես զգալ մեր հոգին, Մեր հայրերի՛նը: 25<sup>օ</sup> որ հայ չես ու չես ծնուել դու հայ:

Ես ստիպուած ու կիսակատակի Մի բան ասում եմ Եւ ինձ փրկում եմ լուրջ պատասխանից, Բայց այս ռուպէին կ'ուզեմ մէկընդմիջտ, Լուրջ ու անկատակ, Պատասխան տալ այս կրկնուող հարցին, - Այո՛, բարեկամ, ընկեր, հարապատ, Պարզ է, հայ չեմ ես Եւ ոչ ալ պարսիկ: Թող այսպէս ասեմ.-

Ես մի գիւլանցի եւ իրանցի եմ, Կեանքը վիճակեց հայերէն գիտնալ, Գրել ու կարդալ, Զգալ հայ հոգուն. Եւ շատ էլ չնչին Կարողութեան չափ Ծառայել նրա մշակույթին - Ու գրական հոգուն: Եւ ես եմ այս օր Ոչ հայ բանաստեղծ Ինձ անուանել են Հայ ժողովուրդի պարսկախօս պաւակ, Որ արդէն գիտէ Մաշտոցի լեզուով Հայերէն խօսիլ, խոկալ հայերէն, Հայերէն խնդալ, տխրալ հայերէն, Հայի հետ նստած տօնում են, ցնձում, Նրա ծէսերին յաճախ մասնակցում: Երբ որ կարդում եմ հայոց պատմութիւն, Ա՛յս ժողովրդի կեանքը տխրուրախ, Ելեւէջներին նրա փոթորկոտ Ես էլ եմ բախձում Եւ նրախանում: Երբ որ յաղթում է ազգը չարութեան Ու բռնապետին՝ Ես էլ եմ զգում իմ նրալներում Զաղթականի շունչ:

Եւ հպարտութիւն. Սիրտս է դառնում նրանց յուշերի յաղթականարը

Ու երբ պարտում են՝ Ես էլ եմ զոհուում հապարների հետ, Ես էլ եմ լացում Մայրերի լալկան, վշտահար սրտում: Եւ ես էլ ունեմ «Ապրիլ քսանչորս», Այդ Եղեռնը Մեծ: Երբ որ լսում եմ Սայաթ Նովու այդ անմոռանալի սապ ու քամանչէն,

Ինձ էլ է այրում, Ինձ էլ է գերում: Ես էլ եմ սիրում Տէրեանի հետ Այրուեմ սիրուց Եւ փափկասուն ու քնքուշ, նրբիրան Հայ աղջիկներին զովասանք ասեմ: Ու Չարենցի հետ ամբոխն երգեմ Եւ երգեմ նրան «Երկիր Նախիրի»ն: Թումանեանի «Անուշը» փրկեմ

Բախտից ու մահից: Թէ Բելլայի հետ զեփիտ դառնում ու - սարից իջնեմ:

Այո՛, իմ ծանօթ, Բարեկամ իմոյ, Սիրում եմ ես քո ազգն ու մշակույթ, Ես՛ մի իրանցի, ոչ հայ բանաստեղծ. Սիրում եմ այնքա՛ն, որքան դու սիրես, Քանի որ ես մարդ՝ մարդուն եմ սիրում Եւ նրա հոգու ստեղծած վիճը.

Ու այս է հիմա 2եր այդ կրկնուող հարցի պատասխան. Թէ սիրում եմ ես հայ ու հայերէն, Եւ ոչ թէ չար ու մարդասպան գապան, Մարդասուն գապան, Ապա հայ ինչի Եւ թէ այլ ազգի, Քանի տենչում եմ Աշխարհն այս հին Դառնայ մի մեծ մարդկային համերգ Եւ մարդը մարդու եղբայրը դառնայ Եւ երգեն իրար անենապոչմը Վեհ, յախտենական: Այս է պատասխան իմ ապի՛ւ պ ծանօթ, Իմ հայ բարեկամ:

## ԱՆՏԻՊ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

**ՍԻՐՏ ԻՄ ՍԵՐԱՎԱՐ**

Բարբարոս չեմ ես Եւ ոչ էլ անխիղճ, Բայց կ'ուզեմ հիմա Հուրն աչքերիդ Տարածել համայն փետրն աշխարհի Եւ սովորել տալ այն բոլոր աշխարհին. Ո՞նց վառուել գիտի Սիրտն իմ սիրահար:

14 Յունուար 2002, Թեհրան

**ԻՐԱՐ ԽԱՐԵՅԻՆՔ**

Մի ամբողջ կեանքով իրար խաբեցինք. Սիրահար չէինք՝ սերը խաբեցինք, Անհետ լափեցինք, Անցանք, հետագանք, հետո իրարից. Աւա՛ղ, չգիտեմք ո՛վ ում խաբեցինք...

16 Մայիս 2002, Թեհրան

**ՉԱՆԳԵՐԻ ՉԱՅՆ**

Իմ հանգուցեալ բարեկամ՝ Աղասի Յովհաննիսեանի յիշատակին ԱՀՄԱՏ ՆՈՒՐԻԶԱՏԷ

Ամէն անգամ որ կարդում եմ Թեթրեթում մահազո կամ երբ լսում եմ Ծանօթ, բարեկամ, Հեռու-հեռաւոր Ինչ որ ազգական վախճանուել է նոր եւ թէ աշխարհի ինչ-որ մի ծայրում մի անծանօթ մարդ Մեռել, սպանուել, Նոյնքան եմ տխրում, Այնքան եմ տխրում, Որ ասես երբեք Ըլ չի ծագելու արեւը երբեք Եւ աշխարհը ողջ Պիտ խորասուզուի Մուրթերում յաւէտ: Ո՛վ մարդ, լսում ես Գագերի ձայնը Այս վայրկեանական կեանքում -տխրուրախ

Գէթ մի ակնթարթ Իմ ձայնը լսի՛ր, Իմ հառաչանքը՝ Գո սիրոյ կարօտ:

26 Մայիս 2002, Թեհրան

**ՔԵՉ ԵՍ ԳՏՆԵԼՈՒ**

Իմ աչքերի մէջ երբե՛ք մի նայիր, Գո ցամ է այն տեղ Անդուլ թափառում: Իմ կուրծքը երբեք, երբեք չբաճա՛ս,

Գո սերն է այն տեղ թախիծ գարկերգում: Թէ կ'ուզես լսել ցաւերգը մարդու՝ Իմ ձայնը լսի՛ր... Իսկ թէ ուզեցիր Գիտնալ իմաստն իմ տառապանքի, Հայելուն նայի՛ր, Գեղգ ես գտնելու:

26 Մայիս 2002, Թեհրան

**ՏԵՈՒՐ ԲԱՆՏ**

Քիչ - քիչ հասնում եմ Ըլ իմ ասարտին, Գիշերը սուլում է Իմ երակներում Ու ցամ անվերջ Ինձ հայածում է: Ինչե՛ր շահեցիր սիրահար իմ սիրտ. Անվերջ երազանք, Անվերջ տառապանք Ու մի տխուր բախտ:

12 Յունիս 2002, Թեհրան

**ԿԱՐԱՊԻ ԵՐԳԸ**

Երկար չերգեցի, Երկար՝ հոգեմաշ Վախս միշտ դա էր, Չանի իմ փոխան Կարապը երգի Սրտիս խորքերում:

30 Յունիս 2002, Թեհրան

**ԹԷ ԻՆՉ ՀԱՐՅՆԵՍ...**

Մի անքուն գիշեր, Մի անուշ երազ, Մի կործանուած կեանք, Մի թախճալի սիրտ, Անվերջ սպասում, Թէ ինձ հարցնե՛ս:

15 Յունիս 2002, Թեհրան

**ԱՒԵՐԱԿՆԵՐՈՒՄ**

Ըլ բաւ է իմ մէջ թափառել անվերջ. Կարօտն իմ անքուն, Կարօտն իմ անուշ, Սիրոյ երազը յաւէտ մոռացի՛ր. Հողմաշունչ քառու իմ տառապանքի Հալածում է քեզ, Դեղնած երազը տանջահար սիրոյ Աւերակ է մութ. Կարօտն իմ անուշ Աւերակներում Սեր չես գտնելու...

17 Յունիս 2002, Թեհրան

# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ


ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



## ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄՈՎ ՖԻԼՄԱՅԻ ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ԵՐԳԻՉՆԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՄԱՑԱՆՑԻ ԿԱՅՔԵՐ



